

Հավելված  
ՀՀ կառավարության 2015թ.  
ապրիլի 30-ի նիստի N 19  
արձանագրային որոշման



EUROPEAN UNION



«Հայաստանի Հանրապետության կառավարության

2015 թվականի ապրիլի N  
արձանագրային որոշման հավելված

**COST-SHARING AGREEMENT**  
**BETWEEN THE UNITED NATIONS DEVELOPMENT PROGRAMME AND THE**  
**GOVERNMENT OF ARMENIA**

**ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՄԻՋԵՎ

<p>WHEREAS the United Nations Development Programme (hereinafter referred to as "UNDP") and the Government of Armenia (hereinafter referred to as the "Government") have agreed to co-operate within the framework of the "Agreement Between the Government of Armenia and the United Nations Development Programme Regarding Assistance to and Cooperation with the Government" (SBAA) signed on 8 March 1995;</p>	<p>Հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՄԱԶԾ) և Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) համաձայնել են համագործակցել 1995թ. մարտի 8-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի միջև</p>
---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>WHEREAS UNDP and the Government have agreed to co-operate in the implementation of “Provision of Equipment and Infrastructure for the Bagratashen-Sadakhlo Border Crossing Point between Armenia and Georgia and enhancement of their capacities” project in Armenia (hereinafter referred to as "the Project"), as described in the Project document, and submitted to the Government for information;</p> <p>WHEREAS the Government has informed UNDP of its willingness to contribute funds (hereinafter referred to as "the contribution") to the UNDP on a cost-sharing basis to increase the resources available for the Project;</p> <p>NOW THEREFORE, UNDP and the Government hereby agree as follows:</p> <p style="text-align: center;"><b><u>Article I</u></b></p> <p>1. The Government shall, in the manner referred to in paragraph 2 of this Article, place at the disposal of UNDP the contribution of EUR 434,500 (four hundred and thirty-four thousand five hundred Euros).</p> <p>2. The Government shall, in accordance with the schedule of</p>	<p>կառավարության հետ համագործակցության և օժանդակության ցուցաբերման մասին համաձայնագրի» շրջանակներում,</p> <p>հաշվի առնելով, որ Կառավարությունը և ՄԱԶԾ-ն համաձայնել են համագործակցել «Սարքավորումների տրամադրում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանին գտնվող «Բագրատաշեն» և «Սադախլո» պետական սահմանի անցման կետերին և դրանց կարողությունների զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման կապակցությամբ, ինչպես այն նկարագրված է ՀՀ կառավարության ուշադրությանը ներկայացված ծրագրային փաստաթղթում,</p> <p>հաշվի առնելով, որ Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցների ծավալն ընդլայնելու նպատակով Կառավարությունը ՄԱԶԾ-ին հայտնել է համաֆինանսավորման հիմունքներով միջոցներ (այսուհետ՝ Հատկացում) հատկացնելու իր պատրաստակամության մասին,</p> <p>ելնելով վերոգրյալից՝ ՄԱԶԾ-ն և Կառավարությունը համաձայնեցին հետևյալի շուրջ.</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>payments set out below, deposit the contribution in the following bank account:</p> <p>UNDP Contributions Euro Account</p> <p>Bank of America London 5 Canada Square London E14 5AQ United Kingdom Account Number: 62722022 IBAN: GB59 BOFA 1650 5062 7220 22 SWIFT Code: BOFAGB22</p>	<p style="text-align: center;"><b>Հոդված I.</b></p> <p>1. Կառավարությունը պարտավորվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ՄԱԶԾ-ին հատկացնել 434.500 եվրո Հատկացում:</p> <p>2. Կառավարությունը պարտավորվում է Հատկացումը կատարել համաձայն ստորև բերվող վճարման ժամանակացույցի՝ ՄԱԶԾ-ի հետևյալ բանկային հաշվեհամարին՝</p>				
<table border="1"> <thead> <tr> <th><u>Date payment due (EUR)</u></th> <th><u>Amount</u></th> </tr> </thead> <tbody> <tr> <td>May 11, 2015</td> <td>434,500</td> </tr> </tbody> </table>	<u>Date payment due (EUR)</u>	<u>Amount</u>	May 11, 2015	434,500	<p style="text-align: center;"><b>Հայաստանում ՄԱԶԾ ներկայացուցչության եվրոյի հաշիվ՝</b></p> <p style="text-align: center;"><b>Bank of America London</b></p> <p style="text-align: center;"><b>5 Canada Square</b></p> <p style="text-align: center;"><b>London E14 5AQ United Kingdom</b></p> <p style="text-align: center;"><b>Account Number: 62722022</b></p> <p style="text-align: center;"><b>IBAN: GB59 BOFA 1650 5062 7220 22</b></p> <p style="text-align: center;"><b>SWIFT Code: BOFAGB22</b></p>
<u>Date payment due (EUR)</u>	<u>Amount</u>				
May 11, 2015	434,500				
<p>3. The Government will inform UNDP when the Contribution is paid via en e-mail with remittance information to <a href="mailto:contributions@undp.org">contributions@undp.org</a> copied to <a href="mailto:davit.asatryan@undp.org">davit.asatryan@undp.org</a> providing the following information:</p> <p>Government of Armenia, UNDP country office, Project No. 00078107-00088554 and title “Provision of Equipment and Infrastructure for the Bagratashen-Sadakhlo Border Crossing Point between Armenia and Georgia and enhancement of their capacities”, Government reference on allocation of contribution (if available). This information should also be included in the bank remittance advice when funds are remitted to UNDP.</p>	<table border="1"> <thead> <tr> <th><u>Վճարման ամսաթիվ</u></th> <th><u>Գումար (եվրո)</u></th> </tr> </thead> <tbody> <tr> <td>2015թ. մայիսի 11</td> <td>434.500</td> </tr> </tbody> </table> <p>3. Կառավարությունը հատկացման վճարման մասին ՄԱԶԾ-ին տեղեկացնում է <a href="mailto:contributions@undp.org">contributions@undp.org</a> և կրկնօրինակը (cc:)՝ <a href="mailto:davit.asatryan@undp.org">davit.asatryan@undp.org</a> էլեկտրոնային հասցեով ուղղված՝ փոխանցման վերաբերյալ տվյալները</p>	<u>Վճարման ամսաթիվ</u>	<u>Գումար (եվրո)</u>	2015թ. մայիսի 11	434.500
<u>Վճարման ամսաթիվ</u>	<u>Գումար (եվրո)</u>				
2015թ. մայիսի 11	434.500				

<p>4. The value of the payment, if made in a currency other than United States dollars, shall be determined by applying the United Nations operational rate of exchange in effect on the date of payment. Should there be a change in the United Nations operational rate of exchange prior to the full utilization by the UNDP of the payment, the value of the balance of funds still held at that time will be adjusted accordingly. If, in such a case, a loss in the value of the balance of funds is recorded, UNDP shall inform the Government with a view to determining whether any further financing could be provided by the Government. Should such further financing not be available, the assistance to be provided to the BSIBM Project may be reduced, suspended or terminated by UNDP.</p> <p>5. The above schedule of payments takes into account the requirement that contributions shall be paid in advance of the implementation of planned activities. It may be amended to be consistent with the</p>	<p>պարունակող էլեկտրոնային նամակի միջոցով, որում նշվում են հետևյալ տեղեկությունները՝ Կառավարության անվանումը, ՄԱԶԾ գրասենյակը, Ծրագրի համարը՝ 00078107-00088554 Ծրագրի անվանումը՝ «Սարքավորումների տրամադրում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանին գտնվող «Բագրատաշեն» և «Սադախլո» պետական սահմանի անցման կետերին և դրանց կարողությունների զարգացում», և Կառավարության հղումը դրամական միջոցների տեղա-բաշխման վերաբերյալ (առկայության դեպքում): Այդ տեղեկությունները պետք է ներառվեն նաև ՄԱԶԾ-ին Հատկացման փոխանցման անդորրագրում:</p> <p>4. Եթե Հատկացումը կատարվել է այլ արտարժույթով քան ԱՄՆ դոլարն է, ապա Հատկացման արժեքը պետք է որոշվի համաձայն Միավորված ազգերի կազմակերպության վճարման պահին գործող փոխանակման փոխարժեքով: Նախքան Հատ-կացման ամբողջ գումարը ՄԱԶԾ-ի կողմից օգտագործելը, Միավորված ազգերի կազմակերպության գործող փոխա-նակման փոխարժեքի փոփոխության դեպքում, առկա հատկաց-</p>
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>progress of project delivery.</p> <p>6. All financial accounts and statements shall be expressed in United States dollars.</p> <p>7. UNDP may agree to accept Contributions in a currency other than United States dollars provided such currency is fully convertible or readily usable by UNDP and subject to the provisions of paragraph 5 above. Any change in the currency of the Contribution shall be made only in agreement with UNDP.</p> <p>8. Any interest revenue attributable to the contribution shall be credited to the UNDP Account and shall be utilized in accordance with established UNDP procedures.</p> <p style="text-align: center;"><b>Article II</b></p> <p>1. In accordance with the decisions and directives of UNDP's Executive Board reflected in its Policy on Cost Recovery from Other Resources, the Contribution shall be subject to cost recovery for indirect costs incurred by UNDP headquarters and country office structures in providing</p>	<p>ման մնացորդի արժեքը համապատասխանորեն կճշտգրտվի: Եթե այս դեպքում արձանագրվել է Հատկացման մնացորդի արժեքի նվազում, ՄԱԶԾ-ն պարտավորվում է տեղեկացնել Կառավարությանը՝ պարզելու նպատակով, թե արդյոք Կառավարության կողմից կարող է տրամադրվել լրացուցիչ ֆինանսավորում: Նման լրացուցիչ ֆինանսավորման բացակայության դեպքում, ՄԱԶԾ-ն կարող է նվազեցնել, կասեցնել կամ դադարեցնել Ծրագրին ցուցաբերվող աջակցությունը:</p> <p>5. Վերը նշված վճարումների ժամանակացույցում հաշվի է առնվում այն պահանջը, որ Հատկացումը պետք է իրականացվի նախքան Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը: Այն կարող է փոփոխվել Ծրագրի իրականացման ընթացքին համապատասխան:</p> <p>6. Բոլոր ֆինանսական հաշիվները և հաշվետվությունները պետք է արտահայտվեն ԱՄՆ դոլարով:</p> <p>7. ՄԱԶԾ-ն կարող է համաձայնել ընդունել Հատկացումն այլ արտարժույթով, եթե այդ արտարժույթը</p>
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>General Management Support (GMS) services. To cover these GMS costs, the contribution shall be charged a fee equal to 7%. Furthermore, as long as they are unequivocally linked to the specific project, all direct costs of implementation, including the costs of implementing partner, will be identified in the project budget against a relevant budget line and borne by the project accordingly.</p>	<p>լիարժեք փոխարկելի է կամ կարող է օգտագործվել ՄԱԶԾ-ի կողմից և համապատասխանում է սույն հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին: Հատկացման արտարժույթի ցանկացած փոփոխություն կարող է կատարվել միայն ՄԱԶԾ-ի հետ փոխհամաձայնեցման միջոցով:</p> <p>8. Հատկացումից բխող ցանկացած տոկոսային եկամուտ փոխանցվում է ՄԱԶԾ բանկային հաշվին և օգտագործվում ՄԱԶԾ սահմանված ընթացակարգերին համապատասխան:</p>
<p>2. The aggregate of the amounts budgeted for the project, together with the estimated costs of reimbursement of related support services, shall not exceed the total resources available to the project under this Agreement as well as funds which may be available to the project for project costs and for support costs under other sources of financing.</p> <p style="text-align: center;"><b>Article III</b></p> <p>1. The contribution shall be administered by the UNDP in</p>	<p style="text-align: center;"><b>Հոդված II.</b></p> <p>1. ՄԱԶԾ գործադիր խորհրդի որոշումներում և հրահանգներում արտահայտված՝ այլ աղբյուրներից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման ընթացում ծախսերի փոխհատուցման քաղաքականության շրջանակներում, ՄԱԶԾ գլխամասային և Հայաստանի գրասենյակների կողմից Ընդհանուր կառավարման աջակցության (այսուհետ՝ ԸԿԱ) ծառայությունների հետ կապված անուղղակի ծախսերը փոխհատուցվում են Հատկացման գումարի հաշվին: Նշված ԸԿԱ ծախսերի</p>

<p>accordance with UNDP regulations, rules, policies and procedures, applying its normal procedures for the execution of its projects.</p> <p>2. Project management and expenditures shall be governed by the regulations, rules, policies and procedures of UNDP.</p> <p style="text-align: center;"><b><u>Article IV</u></b></p> <p>1. The implementation of the responsibilities of the UNDP to this Agreement and the relevant project document shall be dependent on receipt by the UNDP of the contribution in accordance with the schedule of payments set out in Article 1, paragraph 2, above. UNDP shall not start implementation of the activities prior to receiving the Contribution.</p> <p>2. If unforeseen increases in expenditures or commitments are expected or realized (whether due to inflationary factors, fluctuation in exchange rates or unforeseen contingencies) UNDP shall submit to the Government on a timely basis a supplementary estimate showing the further financing that will be necessary. The Government shall use its best endeavors to make available to UNDP the additional funds required.</p>	<p>փոխհատուցման միակ աղբյուրը Հատկացման գումարն է, որից կկատարվի պահում՝ 7%-ի չափով: Այնուհետև, եթե դրանք ուղղակիորեն կապված են որոշակի ծրագրի(երի) հետ, ապա իրականացման հետ կապված բոլոր ուղղակի ծախսերը, այդ թվում իրականացման գործընկերոջ ծախսերը Ծրագրի բյուջեում կարտացոլվեն համապատասխան հոդվածի տողով և համապատասխանաբար կվճարվեն Ծրագրի հաշվին:</p> <p>2. Ծրագրի բյուջեով նախատեսված ընդհանուր գումարը Ծրագրի իրականացման հետ կապված օժանդակ ծառայությունների տրամադրման դիմաց փոխհատուցման հաշվարկ-ված գումարի հետ միասին չպետք է գերազանցի սույն Համաձայնագրով Ծրագրին հատկացված ընդհանուր միջոցները, ինչպես նաև Ծրագրի ծախսերը և օժանդակ ծառայությունների ծախսերը հոգալու նպատակով ֆինանսավորման այլ աղբյուրներից Ծրագրի ստացած միջոցները:</p> <p style="text-align: center;"><b>Հոդված III.</b></p> <p>1. Հատկացումը պետք է կառավարվի ՄԱԶԾ կողմից՝ իր կանոնակարգերին,</p>
---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>3. If the Contribution referred to in Article I, paragraph 2, above, is not received in accordance with the payment schedule, or if the additional financing required in accordance with paragraph 2, above, is not forthcoming from the Government or other sources, the assistance to be provided to the Project under this Agreement may be reduced, suspended or terminated by UNDP.</p> <p style="text-align: center;"><b><u>Article V</u></b></p> <p>Ownership of equipment, supplies and other property financed from the contribution shall vest in UNDP at the time of acquisition or construction of assets. As soon as assets are brought to their final location, the ownership should be transferred to the Government in accordance with UNDP's regulations, rules, policies and procedures.</p> <p style="text-align: center;"><b><u>Article VI</u></b></p>	<p>կանոններին, քաղաքականությանն ու ընթացակարգերին համապատասխան՝ կիրառելով ՄԱԶԾ կողմից իրականացվող ծրագրերի նկատմամբ ընդունված ընթացակարգերը:</p> <p>2. Ծրագրի ղեկավարումը և ծախսերը կարգավորվում են ՄԱԶԾ կանոնակարգերով, կանոններով, քաղաքականությամբ ու ընթացակարգերով:</p> <p style="text-align: center;"><b>Հոդված IV.</b></p> <p>1. ՄԱԶԾ կողմից սույն Համաձայնագրով և Ծրագրի փաստաթղթով նախատեսված պարտավորությունների կատարումը պայմանավորված է ՄԱԶԾ-ի կողմից սույն Համա-ձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ կետում նշված ժամանակացույցին համապատասխան Հատկացումը ստանալու հանգամանքով: ՄԱԶԾ-ն չպետք է մեկնարկի Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը մինչև Հատկացման ողջ գումարի ստանալը:</p> <p>2. Եթե ակնկալվում են կամ տեղի են ունեցել ծախսերի կամ պարտավորությունների ծավալների չնախատեսված ավելացումներ</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------



<p>The contribution shall be subject to the internal and external auditing procedures provided for in the financial regulations, rules, policies and procedures of UNDP.</p> <p style="text-align: center;"><b><u>Article VII</u></b></p> <p>UNDP shall provide the Government with financial and other reports prepared in accordance with UNDP accounting and reporting procedures.</p> <p style="text-align: center;"><b><u>Article VIII</u></b></p> <p>1. UNDP shall notify the Government when all activities relating to the Project have been completed in accordance with the Project document.</p> <p>2. Notwithstanding the completion of all activities relating to the Project, UNDP shall continue to hold unutilized funds from the Contribution until all commitments and liabilities incurred in implementation of the activities finance by the contribution have been satisfied and these activities brought to an orderly conclusion.</p> <p>3. If the unutilized funds prove insufficient to meet such commitments and liabilities, UNDP shall notify the Government and consult with the Government on the</p>	<p>(արժեզրկման գործոն, արտարժույթի փոխարժեքի չկանխատեսված տատանումներ կամ այլ չնախատեսված ծախսեր), ապա ՄԱԶԾ-ն պարտավորվում է այդ մասին ողջամիտ ժամկետներում տեղեկացնել Կառավարությանը՝ վերջինիս ներկայացնելով Ծրագրի հետագա իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցների հաշվարկը: Կառավարությունը պարտավորվում է ձեռնարկել բոլոր միջոցները՝ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ձեռքբերելու ուղղությամբ:</p> <p>3. Եթե սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ կետում նշված վճարումները չեն ստացվում վճարման ժամանակա-ցույցին համապատասխան, կամ սույն հոդվածի 2-րդ կետում նշված անհրաժեշտ լրացուցիչ դրամական կամ այլ միջոցները Կառավարության կողմից կամ այլ աղբյուրներից չեն տրամադրվում, ապա ՄԱԶԾ-ն կարող է նվազեցնել, կասեցնել կամ դադարեցնել Ծրագրին ցուցաբերվող աջակցությունը:</p> <p style="text-align: center;"><b>Հոդված V.</b></p> <p>Հատկացման գումարով ձեռք բերված նյութատեխնիկական միջոցների,</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>manner in which such commitments and liabilities may be satisfied.</p> <p>4. In cases where the Project is completed in accordance with the project document any funds below 5,000 USD (five thousand US Dollars) that remain unexpended after all commitments and liabilities have been satisfied shall be automatically reallocated by UNDP. Any funds above 5,000 USD (five thousand US Dollars) that remain unexpended after all commitments and liabilities have been satisfied shall be reallocated by UNDP after consultation with the Government.</p> <p style="text-align: center;"><b><u>Article IX</u></b></p> <p>1. After consultations have taken place between the two Parties to this Agreement and provided that the funds from the Contribution already received are, together with other funds available to the Project, sufficient to meet all commitments and liabilities incurred in the implementation of the Project, this Agreement may be terminated by UNDP or by the Government. The Agreement shall cease to be in force thirty days after either of the Parties may have given notice in</p>	<p>սարքավորումների և այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է ՄԱԶԾ-ին: ՄԱԶԾ-ի կողմից սեփականության իրավունքի փոխանցման պայմանները պետք է որոշվեն համաձայն ՄԱԶԾ-ի համապատասխան կանոնների և ընթացակարգերի:</p> <p style="text-align: center;"><b>Հոդված VI.</b></p> <p>Հատկացումը ենթակա է ներքին և արտաքին աուդիտի՝ ՄԱԶԾ ֆինանսական կարգավորումներին, կանոններին, քաղաքականությանը և ընթացակարգերին համապատասխան:</p> <p style="text-align: center;"><b>Հոդված VII.</b></p> <p>ՄԱԶԾ-ն պարտավոր է, ըստ պահանջի, Կառավարությանը ներկայացնել ֆինանսական և այլ հաշվետվություններ՝ կազմված համաձայն ՄԱԶԾ-ի հաշվետվությունների ներկայացման ընթացակարգերի:</p> <p style="text-align: center;"><b>Հոդված VIII</b></p> <p>1. Ծրագրի փաստաթղթին համապատասխան Ծրագրի հետ կապված գործողությունների ավարտին ՄԱԶԾ-ն այդ մասին տեղեկացնում է Կառավարությանը:</p> <p>2. Անկախ Ծրագրում ներառված բոլոր</p>
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>writing to the other Party of its decision to terminate the Agreement.</p> <p>2. If the unutilized contribution-payments, together with other funds available to the Project, are insufficient to meet such commitments and liabilities, UNDP shall notify the Government and consult with the Government on the manner in which such commitments and liabilities may be satisfied.</p> <p>3. Notwithstanding termination of this Agreement, UNDP shall continue to hold unutilized funds until all commitments and liabilities incurred in implementation of the activities financed by the contribution have been satisfied and these activities brought to an orderly conclusion.</p> <p>4. In cases where this agreement is terminated before Project completion any funds below 5,000 USD (five thousand US Dollars) that remain unexpended after all commitments and liabilities have been satisfied shall be automatically reallocated by UNDP. Any funds above 5,000 USD (five thousand</p>	<p>գործողությունների ավարտից, ՄԱԶԾ-ն կշարունակի պահել Հատկացման չօգտագործված միջոցները, մինչև Հատկացմամբ ֆինանսավորված աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած բոլոր հանձնառությունները և պարտավորությունները բավարարվեն և այդ աշխատանքները պատշաճ կերպով ամփոփվեն:</p> <p>3. Համապատասխան հանձնառությունները և պարտավորությունները կատարելու համար չօգտագործված դրամական միջոցների բավարար չլինելու դեպքում, ՄԱԶԾ-ն այդ մասին կտեղեկացնի Կառավարությանը և վերջինիս հետ կխորհրդակցի այդ հանձնառությունների և պարտավորությունների կատարման հնարավոր եղանակների շուրջ:</p> <p>4. Ծրագրի փաստաթղթին համապատասխան Ծրագրում ներառված բոլոր հանձնառությունները և պարտավորությունները կատարելուց հետո 5000 (հինգ հազար) ԱՄՆ դոլարի շեմը չգերազանցող և չօգտագործված դրամական միջոցներն ավտոմատ կերպով կվերաբաշխվեն ՄԱԶԾ-ի կողմից: Բոլոր հանձնառությունների և պարտավորությունների կատարումից</p>
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>US Dollars) that remain unexpended after all commitments and liabilities have been satisfied shall be reallocated by UNDP after consultation with the Government.</p> <p style="text-align: center;"><b><u>Article X</u></b></p> <p>Any notice or correspondence between UNDP and the Government will be addressed as follows:</p> <p>(a) To the Government:</p> <p style="padding-left: 40px;">Gagik Khachatryan, Ministry of Finance, Minister of Finance Address: 1 Melik Adamyan St., Yerevan, Armenia</p> <p>(b) Upon receipt of funds, UNDP shall send an electronic receipt to the Government email address provided below as confirmation that the remitted funds have been received by UNDP</p> <p style="padding-left: 40px;">Government email address: <a href="mailto:armen.melkikyan@minfin.am">armen.melkikyan@minfin.am</a></p> <p style="padding-left: 40px;">Attention: Gagik Khachatryan, Minister of Finance, Republic of Armenia</p>	<p>հետո 5000 (հինգ հազար) ԱՄՆ դոլարի շեմը գերազանցող և չօգտագործված դրամական միջոցները կվերաբաշխվեն ՄԱԶԾ-ի կողմից՝ Կառավարության հետ խորհրդակցելուց հետո:</p> <p style="text-align: center;"><b>Հոդված IX.</b></p> <p>1. Սույն Համաձայնագրի երկու Կողմերի միջև տեղի ունեցած խորհրդակցություններից հետո ՄԱԶԾ-ն կամ Կառավարությունը կարող են դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ պայմանով, որ հատկացված ֆինանսական միջոցները Ծրագրի այլ ֆինանսական միջոցների հետ միասին բավարար են Ծրագրի իրականացման հետ կապված բոլոր պարտավորությունները կատարելու համար: Սույն Համաձայնագիրն ուժը կորցնում է Կողմերից մեկի կողմից մյուսին սույն Համաձայնագիրը դադարեցնելու վերաբերյալ գրավոր ծանուցում ուղարկելու պահից՝ 30 օր հետո:</p> <p>2. Եթե Հատկացման չօգտագործված գումարները՝ Ծրագրի բյուջեում առկա այլ միջոցների հետ միասին բավարար չեն այդ պարտավորությունները կատարելու համար, ՄԱԶԾ-ն այդ մասին տեղեկացնում</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>(c) To UNDP: Bradley Busetto, UNDP Resident Representative in Armenia</p> <p>Address: 14, Petros Adamyan S Yerevan, Armenia</p> <p style="text-align: center;"><b><u>Article XI</u></b></p> <p>This Agreement shall enter into force upon the signature of this Agreement by parties hereto, on the date of the last signature.</p> <p>IN WITNESS WHEREOF, the undersigned, being duly authorized thereto, have signed the present Agreement in the English and Armenian languages in two copies. In case of discrepancies, the English version shall prevail.</p>	<p>է Կառավարությանը և վերջինիս հետ խորհրդակցում այդ պարտավորությունների կատարման հնարավոր եղանակների շուրջ:</p> <p>3. Անկախ սույն Համաձայնագրի դադարեցումից, ՄԱԶԾ-ն կշարունակի տնօրինել չօգտագործված դրամական միջոցները, քանի դեռ Հատկացմամբ ֆինանսավորված աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած բոլոր պարտավորությունները չեն կատարվել և այդ աշխատանքները պատշաճ կերպով չեն ամփոփվել:</p> <p>4. Այն դեպքերում, երբ սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է մինչև Ծրագրի ավարտը, բոլոր հանձնառությունները և պարտավորությունները կատարելուց հետո 5000 (հինգ հազար) ԱՄՆ դոլարի շեմը չգերազանցող և չօգտագործված դրամական միջոցները կվերաբաշխվեն ՄԱԶԾ-ի կողմից: Բոլոր հանձնառությունների և պարտավորությունների կատարումից հետո 5000 (հինգ հազար) ԱՄՆ դոլարի շեմը գերազանցող և չօգտագործված դրամական միջոցները կվերաբաշխվեն ՄԱԶԾ-ի կողմից՝ Կառավարության հետ խորհրդակցելուց հետո:</p>
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

	<p style="text-align: center;"><b>Հոդված X.</b></p> <p>ՄԱԶԾ և Կառավարության միջև ծանուցումներն ու նամակագրությունն ուղղվում է հետևյալ հասցեներով՝</p> <p>(ա) Կառավարությանը՝ Գագիկ Խաչատրյան, ՀՀ Ֆինանսների նախարարություն Հասցե՝ Մելիք-Աղամյան փող., 1, ք. Երևան, ՀՀ</p> <p>(բ) Դրամական միջոցներն ստանալուն պես ՄԱԶԾ-ն Կառավարությանն ուղարկում է էլեկտրոնային անդորրագիրը՝ ստորև նշված էլեկտրոնային հասցեով, որպես իր կողմից դրամական միջոցների ստացման հավաստում: Կառավարության էլեկտրոնային հասցե՝ <a href="mailto:armen.melkikyan@minfin.am">armen.melkikyan@minfin.am</a></p> <p>Ի գիտություն՝ ՀՀ Ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյան</p> <p>(գ) ՄԱԶԾ-ին՝ ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուգետտո Հասցե՝ Պետրոս Աղամյան փող., 14, ք. Երևան, ՀՀ</p> <p style="text-align: center;"><b>Հոդված XI.</b></p>
--	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

	<p>Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից՝ վերջին ստորագրության օրվանից:</p> <p>Ի հավաստումն վերոշարադրյալի, Կողմերի՝ պատշաճ իրավասությամբ օժտված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Համաձայնագիրն՝ անգլերեն և հայերեն լեզուներով, երկու օրինակից: Տարակարծությունների դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:</p>
--	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

For the Government:	Կառավարության
անունից՝	
(Signature)	(ստորագրություն)
Name: Gagik Khachatryan	Անուն՝ Գագիկ
Խաչատրյան	
Title: Minister of Finance of the Republic of Armenia Պաշտոն՝	
ՀՀ ֆինանսների նախարար	
Date:	Place:
Ամսաթիվ՝	Վայր՝
For the United Nations Development Programme:	ՄԱԶԾ

անունից՝	
(Signature)	(ստորագրություն)
Name: Bradley Busetto	Անուն՝ Բրեդլի
Բուժետոտ	
Title: UNDP Resident Representative	Պաշտոն՝ ՀՀ-ում ՄԱԶԾ
մշտական ներկայացուցիչ	
Date:	Place:
Ամսաթիվ՝	Վայր՝